

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-5-2-Ա

ք. Երևան

14.04.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի ապրիլի 14-ի նիստում քննարկեց 2022 թվականի մարտի 15-ին «Մոտիվ» ՍՊԸ ընկերության (Երևան, Չարենցի նրբ. 2, N 3, AM) «MOTIVE» (No20210818) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը շփոթելու աստիճան նման է 35-րդ դասի ծառայությունների համար միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «motivi» (MIROGLIO FASHION S.R.L. Via Santa Margherita, 23 I-12051 ALBA (CN) (IT), IR 904586 27.09.2006) բառային ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 119-րդ կետի 1-րդ ենթակետի և 122-րդ կետի 1-ին, 7-րդ, 9-րդ ենթակետերի համաձայն բառային ապրանքային նշաններին նման կարող են համարվել բառային ապրանքային նշանները: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է համեմատվող նշաններում մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ, ձայնավորների կազմի մոտիկությամբ, նշանների համընկնող մասերի բնույթով՝ «motive(i)»:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակի բավարարելու, փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանին մասնակի իրավական պահպանություն տալու մասին, քանի որ ծառայությունները,

որոնց համար հայտարկված է «Motive» ապրանքային նշանը կան ծառայություններ, որոնք չեն համընկնում այն ծառայությունների հետ, որոնց համար գրանցված է հակադրված ապրանքային նշանը:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Ներկայացուցիչ Հասմիկ Մելիքսեթյանի կողմից ներկայացված «Motive» (No20210818) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը մասնակի բավարարել, փորձաքննության որոշումն մասնակի չեղյալ ճանաչել և ապրանքային նշանին մասնակի իրավական պահպանություն տալ հետևյալ ծառայությունների համար՝ դաս 35. գովազդի, շուկայավարման և խթանման ծառայություններ, օրինակ՝ նմուշների տարածում. գովազդային հասկացությունների մշակում. գովազդային տեքստերի խմբագրում և հրատարակում. ծառայություններ հասարակական հարաբերությունների բնագավառում. վաճառքի օժանդակման համար որոնման համակարգի օպտիմալացում. առևտրային գործարքների և ֆինանսական գրառումների հետ կապված վարչարարական ծառայություններ, օրինակ՝ հաշվապահական հաշվառում. հաշվետվությունների կազմում հաշիվների վերաբերյալ, առևտրային աուդիտ և հաշվապահական ու ֆինանսական աուդիտ, առևտրային գործունեության գնահատում, հարկային հայտարարագրեր կազմելու և ներկայացնելու ծառայություններ. մարքեթինգային ուսումնասիրության իրականացում. մարքեթինգային ռազմավարության մշակում. դիջիթալ մարքեթինգ. սոշլլ մեդիա մարքեթինգ. բրենդինգ լոգոյի և կորպորատիվ ռճի պատրաստում. մարքեթինգային աուդիտ. իվենթ մարքեթինգ. մարքեթինգային խորհրդատվություն. գովազդային արշավների իրականացում օֆֆլայն և օնլայն տիրույթներում. ինֆլուենս մարքեթինգ. մարքեթինգային թրեյնինգներ. կոնտենտ մարքեթինգ. հաշվապահական հաշվառում. հաշվապահական թրեյնինգներ, վերը նշված ծառայությունները բացառությամբ՝

հագուստի, կոշիկների, պայուսակների, կաշվե արտադրանքի, նորաձևության պատկանելիքների, պարֆիումի, կոսմետիկայի, ակնոցների, ժամացույցների, արևային ակնոցների, զարդերի մանրածախ առևտրին և բիզնես միջնորդությանը վերաբերող ծառայությունների:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ